65-ՐԴ ՆԻՍՏ

1 փետրվարի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Դ. Զուբյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, խնամատարության, լուսավորության և զորական մինիստրները:

Ս. Վրացյան - Ֆրակցիայի կողմից արտակարգ հայտարարություն ունիմ անելու: Երեկվա նիստին նախագահը թույլ տվեց մի անթույլատրելի վարմունք...

Նախագահ - Դուք, ըստ երևույթին, քննադատում եք նախագահի վարմունքը. այդ թույլ տալ չեմ կարող, համաձայն նակազի: Բողոքը պետք է նախ գրավոր ներկայացված լինի:

Վրացյանը փորձում է շարունակել յուր խոսքը, սակայն նախագահը թույլ չի տալիս՝ ասելով, որ ստիպված կլինի ձայնից զրկել:

Ս. Վրացյան - Հնազանդվում եմ նակազին, ուստի և անցնում եմ անմիջապես հայտարարության:

Մեր ֆրակցիան չի մասնակցի այս նիստին, որովհետև դուք եք նախագահում:

Նախագահ - Այդ ձեր իրավունքն է:

Դաշնակցական ֆրակցիան թողնում է դահլիճը:

Նախագահ - Քվորում չլինելու պատճառով նիստը հայտարարում եմ փակված:

Պատգամավորների առաջարկությամբ տեղի ունեցավ մասնավոր խորհրդակցություն:

«Զանգ», 16 փետրվարի 1919թ.